աշակերտուհիք՝ ուսուցիչներով և ուսուցչուհիներով հանդերձ ընդ տնօրէնութեամբ վերատեսուչ Պ Կամենսկու և կառավարչուհի տիկին Լիւտերի։ Այս տեղ վերատեսչի կարգադրութեամբ՝ եկած էին Իէալական դպրոցի երգեցիկ աշակերտներն, որոնց հետ և աշակերտուհեաց երգեցիկ դասը միանալով Պ. Իրիցկու կառավարութեամբ և դաշնամուրի ձայնակցութեամբ՝ երբ Վեհափառ Կաթուղիկոսը մօտենում էր դահլիճի մուտքին, սկսաւ երգել ընդունելութեան պատշաճ մի երգ։ Վեհափառը ներս մտնելով Խաչի նշանով օրհնեց ուսանող խմբին և բոլոր այն տեղ ժողովուած անձանց՝ արանց և կանանց։ Երգասացութիւնը լռեց։ Յետ այնորիկ Նորին Վեհափառութիւնը զանազան հարցերով դիմեց մերթ վերատեսչին և մերթ կառավարչուհուն, ցանկանալով իմանալ թէ քանի՞ աշակերտուհի են ուսանում գիմնազիօնում, ինչ դաւանութեան և ինչ ազգութեան են պատկանում նոքա և ինչպիսի յառաջադիմութիւն են ցոյց տալիս։ Պատասխաններից երեւեցաւ, որ աշակերտուհեաց ընդհանուր թիւն է 240, որոնցից մեծագոյն մասն կազմում են ռուսուհիք և հայուհիք. յատկապէս հայուհեաց թիւն է 80. իսկ թրքուհի կայ մի հոգի միայն։ Նորին Վեհափառութիւնը կամենալով գաղափար կազմել աշակերտուհեաց յառաջադիմութեան չափի և եղանակի մասին՝ առաջարկեց կանչել Ի. դասարանից մի հայ և մի ռուս աշակերտուհի և կարդալ տալ, որոնք եկան և կարդացին Կրիլովի առակներից զանազան հատուածներ։ Վեհափառը գոհ մնաց պատասխաններից և օրհնեց փոքրիկներին։ Յետ այնորիկ ցանկութիւն յայտնեց ձեռագործ աշխատութիւններին եւս ծանօթանալ. բերուեցան մի քանի կտոր ձեռագործ նիւթեր։ Ի վերջոյ երբ Նորին Վեհափառութիւնը ոտքի ելաւ հրաժարական օրհնութիւնը բաշխելու գիմնազիօնի բոլոր պաշտօնեաներին և ուսանողներին՝ յառաջ եկան ուսուցիչներն և ուսուցչուհիք Նորին Օծութեան սուրբ աջն համբուրելու։ Նորին Վեհափառութեան գիմնազիօնում գտնուելու բոլոր ժամանակը մերթ ընդ մերթ երգում էին զանազան երգեր ընտրութեամբ՝ այն ծրագրից, որ կազմուած էր Նոցին Կայսերական Մեծութեան և Նոցա Օգոստափառ Որդւոց այցելութեան ժամանակ համերգելու համար ի միջի այլոց՝ սքանչելի ներդաշնակութեամբ